ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ապրիլ 23-ին, երեկոյան ժամը 21.00-ին, Հայոց Մեծ Եղեռնի 92-րդ տարելիցի նախօրեին, Մոսկվայի հայոց նորակառույց առաջնորդանիստ եկեղեցու շրջափակում տեղի ունեցավ Հսկման արարողություն: Արդեն ավանդույթ դարձած Հսկումն այս տարի միավորել էր Մոսկվայում գործող համարյա բոլոր երիտասարդական կազմակերպություններին:

Սգո հանդիսությունն սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո հավաքվածներին իր խոսքն ուղղեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: Խոսք ասաց նաև Մոսկվայի «Նուռ» եկեղեցասիրաց երիտասարդական կազմակերպության հոգևոր պատասխանատու Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանը: Մշակութային բաժնին իրենց մասնակցությունը բերեցին Մոսկվայի «Օվսաննա» կամերային երգչախումբը, հանրահայտ ջութակահար Կարեն Շահգալդյանը և ուրիշներ:

Ապրիլի 24-ին, ժամը 12.00-ին, Ռուսահայոց Տիրախնամ թեմի նորակառույց Մայր Տաճարի բակում էին հավաքվել մոսկվայաբնակ բազմաթիվ հայորդիք: Սգո հանդիսությանը իրենց ներկայությունն էին բերել Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանության ներկայացուցիչները, Մոսկվայում Երևանի Քաղաքապետարանի ներկայացուցչությունը, Ռուսաստանի Հայերի Միությունը, ինչպես նաև Մոսվայում գործող բոլոր ազգային, հասարակական ու մշակութային կառույցները:

Ներկաները նախ ծաղկեպսակներ դրեցին եկեղեցու բակում կանգնեցված խաչքարին, որից հետո սկսվեց Հոգեհանգստյան հատուկ արարողությունը: Հանդիսադիր Սրբազան Հայրը Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևորականաց դասի առընթերակայությամբ հավաքական աղոթք վերառաքեց առ Աստված՝ Հայոց Մեծ Եղեռնին զոհ դարձած բյուրավոր հայ նահատակների հոգիների խաղաղության ու հանգստության համար: Հավարտ արարողության ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Եզրաս Սրբազանը՝ մասնավորապես ասելով. «Համազգական վիշտն է, որ այսօր համախմբել է մեզ բոլորիս այստեղ՝ նվիրական այս վայրում, նորակերտ մեր Մայր Տաճարի բակում՝ միասին աղոթելու, միասին գլուխ խոնարհելու և հավատարմության մեր ուխտը նորոգելու մեր անմեղ նահատակների մշտավառ և սուրբ հիշատակի առջև: Թուրքական հայաջինջ հրեշածին ծրագիրն ամեն ինչ նախատեսել էր իր մեջ. կազմակերպված սրի քաշել և բնաջնջել մի ողջ ժողովուրդ: Սակայն հաշվի չէին առել ամենակարևորը՝ հայ ժողովրդի ապրելու և իր Աստծուն պաշտելու արդար իրավունքը: Հաշվի չէին առել այն, որ Քրիստոսին հավատարիմ, Քրիստոսի հետ բազմիցս խաչված ու չարչարված մեր ժողովուրդը Քրիստոսակերպ Հարություն պետք է առնի: Եվ այսօրվա նորանկախ մեր Պետությունը, ապրող ու արարող մեր ժողովուրդն այդ հարության հավաստումն ու խոսուն վկայությունն է»:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ